Եզրակացություններ

21-րդ դարաշրջանի սկիզբը նշանավորվում է գլոբալ փոփոխություններով մարդկային գործունեության տարբեր ասպարեզներում, և կրթության ոլորտի բարեփոխումները կոչված են վճռական դեր խաղալ երրորդ հազարամյակի հիմնախնդիրները լուծելու գործընթացներում:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգի հիմնախնդիրների շրջանակը չափազանց մեծ է, սակայն դրանց արդյունավետ լուծումը կարելի է կազմակերպել ռացիոնալ ձևով և հասնել զգալի հաջողությունների նույնիսկ կարճ ժամկետներում: Հայաստանի բարձրագույն կրթությունն արդի փուլում, շուկայական հարաբերությունների համատեքստում, արմատական լուրջ վերափոխումների կարիք ունի: Շուկայական հարաբերությունների անկատարությունն իր բացասական դերն է կատարում տնտեսության այս բնագավառի ավելի հարթ զարգացման և ձևավորման գործընթացներում: Դեռևս լիովին որոշված չեն պետության գործառույթները շուկայական հարաբերությունների կարգավորման հարցերում և շուկայական պայմաններում կրթական համակարգի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներում: Մի կողմից, մեծանում է պետության դերը բարձրագույն կրթության ոլորտի կառավարման ասպարեզում, մյուս կողմից, մրցակցությունը ստիպում է ուսումնական հաստատություններին դրսևորել որոշակի անկախություն իրենց առջև ծառացած ֆինանսատնտեսական խնդիրներն լուծելու համար:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգի մրցունակ լինելու և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանելու միակ գրավականը կրթության *որակն է:* Կրթության որակի ապահովումը համարվում է անհրաժեշտ փուլ բարձրագույն կրթության կառավարման գործընթացներում: Ինտեգրումը ԲԿԵՏ ենթադրում է *որակի ապահովման ազգային համակարգի* հիմնում: Սակայն, ՀՀ-ում չի եղել նման ծառայություն, այդ իսկ պատճառով առկա է փորձի բացակայություն: Ուստի անհրաժեշտ է կիրառել զարգացած երկրների փորձը, որոնք ունեն կայացած կրթական համակարգ և ժամանակի փորձությունն անցած որակի ապահովման հաջողված տարբերակներ: Սակայն ընդօրինակելով վերջիններիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել մեր երկրի ազգային առանձնահատկությունները:

Համակարգի մրցունակ լինելը կախված է նաև մի շարք այլ կարևոր գործոններից, ինչպիսիք են՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման մակարդակը, ուսումնական հաստատության ապահովվածությունը նյութատեխնիկական, ֆինանսական, տեղեկատվական ռեսուրսներով, որոնք նույնպես ուղղակիորեն կապված են կրթության որակի հետ:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգը մրցունակ կարգավիճակ ձեռք բերելու համար, այն պետք է զարգացնի *կանխատեսելիության կարողություն, նպատակասլացություն և նորարական գործունեություն:* Վերջին գործոնը չափազանց կարևոր է, քանի որ մրցակցությունը սերտորեն կապված է առաջընթացի և զարգացման հետ:

Հաջողակ լինելու համար շուկայական պայմաններում կարևոր գործոն է նաև ֆինանսական գործելակերպի մշակումը: Պետական դրամական միջոցների ճիշտ օգտագործումը և լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ներգրավումը չափազանց արդյունավետ ներգործություն կունենան համակարգի տնտեսական հարցերը կարգավորելու գործում:

Մի խոսքով, ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների աստիճանական իրականացումը և աջակցությունն, ինչպես նյութական, այնպես էլ բարոյական, կխթանեն կայուն և մրցունակ կրթական համակարգի ստեղծմանը:

ԼՈՒՍՅԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՏՀ դասախոս, տ.գ.թ., դոցենտ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համակարգային ճգնաժամից ազատվելու համար պետական ապարատի կողմից պետք է ձևավորվի զարգացման որոշակի մոդել: Կառավարման մարմիններն այդ մոդելին պետք է հաղորդեն կոնկրետություն՝ տեխնիկա-տնտեսական հաշվարկների, խնդիրների, նպատակների տեսքով, որոնք ամրագրված կլինեն տարբեր օրենքներով, ինչպես նաև ընդունված որոշումների իրականացման համակարգով: Հայաստանի Հանրապետությունը կոմունիստական գաղափարախոսությանը հարիր տոտալ-պլանային տնտեսությունից ձերբազատվել է և շարժվում է դեպի շուկայական տնտեսության ստեղծումը: Այդ շարժման մեջ պետական կառավարումը ձեռք է բերում հատուկ նշանակություն:

Առանձին հեղինակներ տարբեր կերպ են դասակարգում շուկայական տնտեսության մոդելը: Այսպես, Է.Պ.Դունաևը առանձնացնում է շուկայական տնտեսության 3 հիմնական մոդել՝

1. լիբերալ,
2. սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսության,
3. շուկայական տնտեսության սոցիալ-դեմոկրատական մոդել:

Դրա հետ մեկտեղ, նրանք պետության դերի նշանակությունը ուղղակիորեն կապում են համապատասխան մոդելի հետ: Ըստ նրանց, «պետության տնտեսական դերը էականորեն տարբեր է՝ կապված շուկայական

տնտեսության մոդելի հետ»[1]: Սակայն, բոլոր դեպքերում, պետական կարգավորման և տնտեսական քաղաքականության տրամաբանությունները կարող են չհամընկնել:

Նպատակադրվածությունը պետական կառավարման համակարգում կարևոր է համարվում դրված նպատակների իրականացման տեսանկյունից: «Շահ» հասկացությունը ներառում է բնակչության մոտ առկա պահանջմունքների համակարգը: Նպատակի իրականացման անհրաժեշտ բաղադրամասերն են ռեսուրսները: Տնտեսական առումով ազատությունը ենթադրում է երկու կարևոր բաղկացուցիչ՝ օրենքով սահմանված մասնավոր սեփականության իրավունք և որոշումների կայացման ինքնուրույնություն: VIII-IX դդ. պետության տնտեսական դերը կայանում էր հիմնականում այդ առաջնային իրավունքների պաշտպանության մեջ: XX դարը նշանավորվեց տնտեսության մեջ պետության դերի առկայության համատարած ամրապնդմամբ: IX դարի երկրորդ կեսին ազգային տնտեսությունը հասավ աննախադեպ մասշտաբների: Դարավերջում տեղի ունեցան գիտատեխնիկական խոշոր զարգացումներ, ի հայտ եկան մի շարք նոր ոլորտներ, խորացավ աշխատանքի հասարակական բաժանումը: Այս բոլոր հանգամանքները առաջացրին մակրոմակարդակում հավասարակշռվածության պահպանման, ինչպես նաև հակապարբարաշրջանային կարգավորման անհրաժեշտություն:

Շուկա սկսեցին ներթափանցել մոնոպոլիստական համակարգերը: Այս պայմաններում մրցակցության ապահովման համար կենսական նշանակություն ձեռք բերեց պետական մարմինների կողմից հակամոնոպոլիստական օրենսդրության ընդունումն ու կիրառումը: Հայտնի է ԱՄՆ-ում 1890թ-ին ընդունված Շերմանի ակտը՝ «հակատրեստային օրենսդրությունը», որը վերացրեց Ֆ.Ռուզվելտը 1933թ-ին: Սոցիալական քաղաքականության իրականացման համար պահանջվում էր տնտեսության պետական կարգավորում: Այսպիսով, այն պայմանավորված էր նոր տնտեսական պահանջմունքների առաջացմամբ, որոնց հետ շուկան իր էությամբ չէր կարող «գլուխ հանել»:

Պետական կարգավորման օբյեկտիվ անհրաժեշտությունն ի հայտ է գալիս տնտեսական զարգացման, արտադրության կենտրոնացմամբ և կապիտալի որոշակի մակարդակի ապահովմամբ:

Ժամանակակից պայմաններում տնտեսության պետական կարգավորումը հանդիսանում է վերարտադրության բաղկացուցիչ մասը:

Պետության դերը շուկայական տնտեսության կարգավորման անմիջական գործընթացում տնտեսագիտության տեսական քննարկումներում արտահայտվում է երկու ծայրահեղություններով. «պետության կողմից տնտեսական բոլոր լուծումների կենտրոնացված իրականացումից մինչև տնտեսավարող սուբյեկտների լիակատար տնտեսական ինքնուրույնություն»[2]:

Գիտական գրականության մեջ գոյություն ունեն ճգնաժամերի բազմաթիվ տեսություններ և մեկնաբանություններ: Կարելի է առանձնացնել նմանատիպ տեսությունների մի քանի խումբ:

Տեսությունների առաջին խումբը տնտեսության զարգացման պարբերաշրջանային բնույթը բացատրում են այնպիսի պատճառներով, որոնք առնչություն չունեն շուկայական տնտեսությանը բնորոշ գծերի հետ: Այս խումբը կարելի է բաժանել 2 ենթախմբերի:

Առաջին ենթախմբում մտնում են այն տեսությունները (Անգլիայի տնտեսագետները՝ հայր և որդի Ստենլի Ջևոնան ու Հերբերթ Ջովանը), որոնք ճգնաժամերի գլխավոր պատճառը համարում են բնության երևույթները: Այսինքն, սրանք նատուրալիստական տեսություններ են: Այս ենթախմբի տեսությունները պարբերաշրջանային գործընթացը բացատրում էին՝ ելնելով բնության երևույթներից, որոնք կապ չունեն արտադրության տվյալ կոնկրետ համակարգի հետ:

Երկրորդ ենթախմբի մեջ մտնում են հոգեբանական տեսությունները, որոնք ճգնաժամի առաջացման պատճառը տեսնում են մարդու էության (բնույթի) կամ հոգեբանության մեջ: Այս տեսությունները տնտեսության զարգացման պարբերաշրջանային բնույթը բացատրում էին մարդկանց լավատեսական կամ վատատեսական գործողություններով: Այս տեսությունների ներկայացուցիչներից են Վ.Պարետոն և Ա.Պիգուն:

Տեսությունների երկրորդ խումբը ճգնաժամերը մեկնաբանում է՝ ելնելով տնտեսական երևույթներից, սակայն տարբեր տեսանկյուններից:

Առաջին ենթախմբում կարելի է առանձնացնել տեսություններ, որոնք ճգնաժամի գլխավոր պատճառ համարում են արտադրության և սպառման միջև հավասարակշռության խախտումը, խնայողությունների ու ներդրումների միջև ծավալների խախտումը և այլն:

Երկրորդ ենթախումբը ճգնաժամը մեկնաբանում է այն իրավիճակով, որ արտադրության արագ աճը առաջացնում է սպառողական ապրանքների գների իջեցում, որն էլ իր հերթին հանգեցնում է արտադրության միջոցների պահանջարկի կրճատմանը:

Կա ևս մի ուղղություն, որը նույնպես կարևոր նշանակություն է ձեռք բերել վերջերս: Այն ճգնաժամը մեկնաբանում է մի շարք գործոններով: Այսպես, գերմանացի տնտեսագետ Ալբերտ Գանը պնդում է, որ ճգնաժամերի պատճառը թաքնված է բանկերի սխալ քաղաքականության ետևում: Հանսենը ճգնաժամերի պատճառները հիմնականում կապում է բանկային կրեդիտների սահմանափակման հետ: Ջ.Մ. Քեյնսը ճգնաժամերի պատճառները տեսնում էր այն բանի մեջ, որ մարդիկ հակված են խնայողությունների: Այդպիսի հակվածությունն իր հերթին հանգեցնում է պահանջարկի սահմանափակության: Արդյունքում եկամտի նորման լինում է ցածր, որը թուլացնում է ձեռներեցների խթանները՝ իրենց կապիտալը ներդնելու արտադրության մեջ: Ըստ

---

[1] Дунаев Э.П., Колганов А.И., Кондратьева Т.С.; Экономическая роль государств на различных этапах становления рыночной экономики: М.; Макс Пресс 2001 - с. 7.

[2] Албегова И.М.; Емцов Р.Г.; Холопов А.В.: Государственная экономическая политика: опыт перехода к рынку – М.; дело и сервис, 1998, էջ 10.11

մարքսիստական տեսության՝ ճգնաժամի հնարավորությունը դառնում է ավելի կոնկրետ, քանի որ որոշիչ նշանակություն է ձեռք բերում փողի գործառույթը որպես վճարման միջոց, այլ ոչ թե որպես փոխանակման միջոց:

Բազմաթիվ տնտեսագետներ գտնում են, որ Ռուսաստանը հայտնվել էր համակարգային (կառուցվածքային) ճգնաժամի ճնշման տակ, և դրա համար կան օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառ է հանդիսանում պլանային կենտրոնացված տնտեսությունից անցումը դեպի շուկայական տնտեսության: Իսկ սուբյեկտիվ պատճառը անցումային շրջանում արդյունավետ տնտեսական քաղաքականության բացակայությունն է:

Համակարգային ճգնաժամին բնորոշ է ոչ թե արտադրության և սպառման միջև ժամանակավոր անհամամասնությունը, ոչ թե արտադրական կարողությունների ու շուկայի տարողունակության միջև խոշորամասշտաբ անհամամասնությունը, այլ դա առաջին հերթին տնտեսական զարգացման գաղափարախոսության փոփոխությունն է: Համակարգային (կառուցվածքային) ճգնաժամը փոխել է արտադրության, խնայողության և սպառման միջև փոխհարաբերությունները: Եվ խոշոր սոցիալ-տնտեսական ցնցումների գլխավոր պատճառներից մեկն այն է, որ ժամանակին չի սահմանվել վերը նշված այդ փոխհարաբերությունների օպտիմումը:

Որոշ տնտեսագետների կարծիքով, ավելի ճիշտ կլիներ համակարգային ճգնաժամը դասել «սպեցիֆիկ տնտեսական ճգնաժամերի»[1] խմբին, այսինքն այն ճգնաժամերի խմբին, որոնք առաջանում են շուկայական տնտեսության պարբերաշրջանային զարգացման հետ ոչ ուղիղ կապով:

Հակաճգնաժամային կառավարումը մեծապես պայմանավորված է տնտեսության մոդելով: Գործնականում կարող են գոյություն ունենալ սոցիալիստական և շուկայական տնտեսությունների տարբեր տեսակներ: Կարելի է ասել, որ զարգացած և զարգացող երկրների շուկայական տնտեսությունները տարբերվում են ոչ թե զարգացվածության աստիճանով, այլ նյութական բարիքների արտադրության և բաշխման միջոցների մոդելով: Զարգացած երկրների տնտեսությունը զարգանում է որպես երկարատև, փոխկապակցված գործընթաց, իսկ զարգացող երկրների տնտեսությունը առաջանում և զարգանում է որպես մոդել՝ օտարերկրյա կապիտալի, տեխնոլոգիայի և գաղափարախոսության ներդրման արդյունքում:

Պետության տնտեսական քաղաքականության նպատակները կարող են հիմնվել ոչ միայն տնտեսական արդյունավետության չափանիշների վրա, այլև կարող են սերտորեն կապված լինել կրոնի, գաղափարախոսությունների, ազգային հարաբերությունների և այլ հարցերի հետ:

Տարբեր երկրներ կարող են ունենալ տարբեր տնտեսական նպատակներ: Օրինակ, տնտեսության արագ աճը առաջնահերթ է համարվում զարգացող երկրների համար: Արդյունաբերական երկրներում առաջին պլան են մղվում շրջակա միջավայրի պահպանության և չվերականգնվող ռեսուրսների սպառման կրճատման խնդիրները: Որպես նպատակ կարող է հանդես գալ նաև գործազրկության կրճատումը:

Խնդիրների հստակեցումն ու դրանց իրականացումը պահանջում է ճշգրիտ տնտեսական հաշվարկներ, որը պետք է հաշվի առնի երկրի իրական տնտեսության հնարավորությունները: Ազգային նպատակները, որոնք պետք է արտացոլվեն պետության ռազմավարական որոշումներում, մի կողմից պայմանավորված են տարբեր խավերի և խմբերի, մյուս կողմից՝ պետության արտաքին քաղաքականության շահերով:

Տնտեսական անկայունության, քաղաքական անորոշության և ընդհանուր սոցիալ-հոգեբանական լարվածության պայմաններում մեծանում է տնտեսական ծրագրի անհրաժեշտությունը, որը հիմնված կլինի այնպիսի գաղափարի վրա, որը կմիավորի մարդու և պետության շահերը: Մարդկային պատմության փորձը ցույց է տվել, որ երկիրը ճգնաժամից դուրս հանելու համար անհրաժեշտ է այնպիսի հստակ նպատակ, որը կընդունվի հասարակության կողմից և կմիավորի ազգին:

Նպատակադրումը պետական կառավարման գործընթացում դասվում է կառավարչական տեսության և պրակտիկայի ամենաարդիական և կարևոր հիմնախնդիրների շարքին: Հենց հասարակության ներքին վիճակը և նրան հուզող խնդիրներն են հանդիսանում պետական կառավարման նպատակների ձևավորման իրական և արդիական աղբյուրներ:

Նախ, անհրաժեշտ է առանձնացնել գլխավոր ռազմավարական նպատակը, այնուհետև իրականացնել այն՝ միաժամանակ հետևելով,որ դրանք միմյանց հետ լինեն փոխկապակցված, և աջակցեն ու փոխլրացնեն իրար: Անհրաժեշտ է նպատակների հիմնավորված սուբորդինացում, այնպես, որ դրանք «աշխատեն» միմյանց համար, որպեսզի մի նպատակի իրականացումը դառնա մյուսի իրականացման աղբյուր: Մյուս կողմից, պետական կառավարման նպատակների հիմնավորվածությունը որոշվում է համապատասխան ռեսուրսներով և ապահովվածությամբ կամ իրավունքով, երբ նպատակներն ամրապնդվում են օրենսդրորեն և կյանքի են կոչվում՝ հիմնվելով օրենքի ուժի վրա: Նպատակների նկատմամբ հիմնական պահանջներն են բնակչության վստահությունը, նպատակների իրականացման արդյունքների համապատասխանությունը նրանց պահանջմունքներին և շահերին:

[1] Современные циклы и кризисы. сб. статьей.-М., 1967.